ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար **ՀՀ Սյունիքի մարզի գ. Քարաշենի միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքների** կատարման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/25 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/25 գնման պայմանագրում **2026 թվականի հունիսի 9-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՊՍ զեկուցագիր:
Փոփոխության նկարագրություն	**N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/25** 1.3 կետնում փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.6 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

23.10.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/25 գնման պայմանագրի

ք. Երևան «09» «06» 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «123» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Բաբայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 01.06.2026թ. պատասխանատու ստորաբաժանման N Ն/27.1/5676-2026 զեկուցագիրը և **ՀՀ Սյունիքի մարզի գ. Քարաշենի միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 23.10.2025թ. կնքված ՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/25 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 1.3 կետում և Պայմանագրի հավելվածում աշխատանքների կատարման ժամկետին վերաբերող «90» թիվը փոխարինել «120» թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011057859 ՀՎՀՀ 02565827	«123» ՍՊԸ ք. Գորիս, Սյունիքի 97 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ 2500011578750100 ՀՎՀՀ 09200345
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Վ. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.	_____ Ա. Բաբայան (ստորագրություն) Կ.Տ.